Մրցույթ՝ Արմավիրի մարզի «Վաղարշապատի Զորավար Անդրանիկի անվան թիվ 12 հիմնական դպրոց» ՊՈԱԿ–ի աշխարհագրության (4 դասաժամ), մաթեմատիկայի (5 դասաժամ), պատմության (6 դասաժամ), ռուսաց լեզվի (21 դասաժամ), տեխնոլոգիայի (12 դասաժամ) ուսուցչի թափուր տեղերի համար

Մրցույթի մասնակիցների գիտելիքներն և մասնագիտական կարողությունների ստուգումն անցկացվելու է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի :
Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի :
Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին :
Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

1. դիմում՝ (Ձև 1),
2. մեկ լուսանկար (3 x4) չափի,
3. բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ՝ (դիպլոմ) ,
4. անձը հաստատող փաստաթուղթ,
5. §Հանրակրթության մասին¦ ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի համապատասխան աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը / առկայության դեպքում /,
6. ինքնակենսագրություն (Ձև 5),
7. այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
8. ՀՀ արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինգրքույկ ,
9. հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր /առկայության դեպքում/,
10. Որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ :

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում : Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկը ամբողջական չէ կամ առկա են թերություններ , մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են նոյեմբերի 15-ից մինչև նոյեմբերի 28-ը ներառյալ, ամեն օր ժամը 10.00-ից մինչև 15.00-ը , բացի շաբաթ և կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից:
Մրցույթը տեղի կունենա **նոյեմբերի 30-ին՝ ժամը՝ 14:00–ին**, ՀՀ Արմավիրի մարզի Վաղարշապատի Զորավար Անդրանիկի անվան N 12 հիմնական դպրոցում .
հասցեն՝ քաղաք Էջմիածին Արագած զանգված 18:
Տեղեկությունների համար զանգահարել (77)85-31-10 հեռախոսահամարով: